



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՉՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ**

<<26 >> << հոկտեմբեր >> 2017 թ

N 121

ք. Եղեգնաձոր

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ԱՍԱՏՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ
ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի 2-րդ մասով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Ասատուր Մկրտչյանի հետ կնքված 2014 թվականի հոկտեմբերի 26-ի N269 աշխատանքային պայմանագրի 5.1 կետի ա) ենթակետը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ ԵՄ՝

1. 2017 թվականի հոկտեմբերի 26-ից լուծել <<Արենիի>> առողջության առաջնային պահպանման կենտրոն ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ասատուր Մկրտչյանի հետ կնքված 2014 թվականի հոկտեմբերի 26-ի N269 աշխատանքային պայմանագիրը:
2. 2017 թվականի հոկտեմբերի 26-ից ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության <<Արենիի>> առողջության առաջնային պահպանման կենտրոն ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Ասատուր Մկրտչյանին, նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր, մինչև մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:



Հ.ՍԱՐԳՍՅԱՆ